

HPV-ի (Մարդու պապիլոմայի վիրուս /ՄՊՎ/) պատվաստանյութ՝ *Ի՞նչ է անհրաժեշտ ձեզ իմանալ:*

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis
Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են կայքերեսով և այլ լեզուներով:
Տե՛ս՝ www.immunize.org/vis

1 Ինչո՞ւ պատվաստվել:

HPV պատվաստանյութը կանխում է մարդու պապիլոմայի վիրուսի (HPV) տեսակներով վարակվելը, որը կապակցված է բազմաթիվ քաղցկեղների հետ, ներառյալ՝

- **արգանդի վզիկի քաղցկեղը** կանանց մոտ,
- **հեշտոցի և վուլվայի քաղցկեղները** կանանց մոտ,
- **հետանցքի քաղցկեղը** կանանց և տղամարդկանց մոտ,
- **կոկորդի քաղցկեղը** կանանց և տղամարդկանց մոտ և
- **առնանդամի քաղցկեղը** տղամարդկանց մոտ:

Ի հավելումն դրան, HPV պատվաստանյութը կանխում է HPV տեսակներով վարակվելը, որոնք առաջացնում են **սեռական գորտնուկներ** և՛ կանանց, և՛ տղամարդկանց մոտ:

Միացյալ Նահանգներում տարեկան մոտ 12000 կին ձեռք է բերում արգանդի պարանոցի քաղցկեղ, և մոտ 4000 կին մահանում է դրանից: HPV պատվաստանյութը կարող է կանխել արգանդի վզիկի քաղցկեղի դեպքերի մեծ մասը:

Սակայն պատվաստումը չի կարող փոխարինել արգանդի վզիկի քաղցկեղի սքրինինգին: Այս պատվաստանյութը չի կարող պաշտպանել HPV բոլոր տեսակներից, որոնք կարող են առաջացնել արգանդի վզիկի քաղցկեղ: Կանայք, միևնույն է, պետք է կանոնավոր կերպով արգանդի վզիկից քսուքներ հանձնեն:

HPV վարակը սովորաբար առաջանում է սեռական հարաբերությունից, և մարդկանց մեծ մասն իրենց կյանքի որևէ փուլում վարակվում են դրանով: Մոտավորապես 14 միլիոն ամերիկացի՝ ներառյալ դեռահասները, յուրաքանչյուր տարի վարակվում է: Վարակների մեծ մասն ինքնաբերաբար է անցնում և չի առաջացնում լուրջ խնդիրներ: Սակայն հազարավոր կանանց և տղամարդկանց մոտ HPV-ից քաղցկեղ և այլ հիվանդություններ են առաջանում:

2 HPV պատվաստանյութը

HPV պատվաստանյութը թույլատրված է FDA-ի (ԱՄՆ սննդի և դեղորայքի վարչություն) կողմից և CDC-ի (Հիվանդությունների վերահսկման կենտրոն) կողմից խորհուրդ է տրվում և՛ տղամարդկանց, և՛ կանանց: Այն սովորաբար տրվում է 11 կամ 12 տարեկանում, բայց կարող է նաև տրվել 9-ից մինչև 26 տարեկան հասակում:

9-ից 14 տարեկան դեռահասների մեծ մասը պետք է HPV պատվաստանյութն ստանա երկու դեղաչափային սերիայով, և դեղաչափերի միջև ընկած ժամանակահատվածը պետք է 6-ից 12 ամիս լինի: Մարդիկ, ում պատվաստումն սկսվում է 15 կամ

HPV VIS – Armenian (12/02/2016)

ավելի տարեկանում, պատվաստանյութը պետք է ստանան երեք դեղաչափային սերիայով, և երկրորդ դեղաչափը պետք է տրվի առաջին դեղաչափից 1-2 ամիս անց, իսկ երրորդը՝ առաջին դեղաչափից 6 ամիս անց: Խորհուրդ տրվող այս տարիքային տարբերակներից մի շարք բացառություններ կան: Ձեր բժիշկը կարող է ձեզ ավելի շատ տեղեկություններ տրամադրել:

3 Որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստանյութը

- Ցանկացած անձ, ով HPV պատվաստանյութի ստացած դեղաչափի նկատմամբ ունեցել է սուր (կյանքին սպառնացող) ակերզիկ ռեակցիա, չպետք է մեկ այլ դեղաչափ ստանա:
- Ցանկացած անձ, ով HPV-ի ցանկացած բաղադրամասի նկատմամբ սուր (կյանքին սպառնացող) ակերզիկ ռեակցիա ունի, չպետք է պատվաստանյութ ստանա:

Հայտնեք ձեր բժշկին, եթե ձեզ հայտնի է, որ դուք (կամ ձեր երեխան) որևէ սուր ակերզիա ունեք՝ ներառյալ սուր ակերզիա խմորասնկի նկատմամբ:

- HPV պատվաստանյութը խորհուրդ չի տրվում հղի կանանց: Եթե իմանում եք, որ պատվաստվելու պահին հղի եք եղել, պատճառ չունեք որևէ խնդիրներ ակնկալելու ձեզ և ձեր երեխայի համար: Ցանկացած կնոջ, ով իմանում է, որ HPV պատվաստանյութ ստանալու պահին հղի է եղել, հորդորում ենք՝ հղիության ընթացքում կապվել HPV պատվաստանյութ արտադրողների ռեեստրի հետ՝ 1-800-986-8999 հեռախոսահամարով: Կրճքով կերակրող կանայք կարող են պատվաստանյութ ստանալ:
- Եթե թեթևակի հիվանդ եք, ինչպես, օրինակ՝ մրսածությունը, դուք, հավանաբար, այսօր կարող եք պատվաստում ստանալ: Եթե միջին աստիճանի կամ ծանր հիվանդություն ունեք, դուք, հավանաբար, պետք է սպասեք մինչև ապաքինվելը: Ձեր բժիշկը կարող է ձեզ խորհուրդներ տալ:

4 Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը

Ցանկացած դեղամիջոցի դեպքում՝ ներառյալ պատվաստանյութը, հնարավոր են կողմնակի ազդեցություններ: Դրանք սովորաբար մեղմ են արտահայտված լինում և անցնում են ինքնաբերաբար, սակայն հնարավոր են նաև լուրջ ռեակցիաներ:



HPV պատվաստանյութ ստացող մարդկանց մեծ մասը դրա հետ կապված որևէ լուրջ խնդիրներ չի ունենում:

HPV պատվաստանյութ ստանալուն հաջորդող մեղմից չափավոր արտահայտված խնդիրներն են՝

- Ռեակցիաներ ձեռքի այն հատվածում, որտեղ ներարկում է կատարվել:
 - Ցավի զգացողություն (10 մարդուց մոտավորապես 9-ի մոտ)
 - Կարմրածություն կամ այտուցվածություն (3 մարդուց մոտավորապես 1-ի մոտ)
- Տենդ՝
 - Թեթև (37,8°C/100°F) (10 մարդուց մոտավորապես 1-ի մոտ)
 - Չափավոր (38,9°C/102°F) (65 մարդուց մոտավորապես 1-ի մոտ)
- Այլ խնդիրներ՝
 - Գլխացավ (3 մարդուց մոտավորապես 1-ի մոտ)

Խնդիրները, որ կարող են առաջանալ ցանկացած պատվաստանյութի ներարկումից հետո՝

- Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժօգործողություններից հետո՝ ներառյալ պատվաստումը: Մոտավորապես 15 րոպե նստած կամ պառկած մնալը կարող է օգնել կանխելու ուշաքափությունը և վայր ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքները: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք թեթև գլխացավ ունեցեք, կամ տեսողության փոփոխություն, կամ ականջներում զնգոց եք զգում:
- Որոշ մարդիկ ներարկումից ուսի սուր ցավ են ունենում և դժվարանում են ձեռքը շարժել: Սա շատ հազվադեպ է լինում:
- Ցանկացած դեղամիջոց կարող է առաջացնել սուր ակտիվ ռեակցիա: Պատվաստանյութից առաջ եկած նման ռեակցիաները շատ հազվադեպ են՝ միլիոնավոր դեղաչափեր տալուց մոտավորապես 1 դեպք, և կարող են առաջանալ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Ինչպես և ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը լուրջ վնասվածքի կամ մահվան պատճառ հանդիսանա:

Պատվաստանյութերի անվտանգությունը միշտ վերահսկվում է: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք՝ www.cdc.gov/vaccinesafety/:

5	Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:
----------	---

Ի՞նչ պետք է ես փնտրեմ:

Փնտրեք ձեզ վերաբերող ցանկացած բան, ինչպես, օրինակ՝ սուր ակտիվ ռեակցիայի նշաններ, շատ բարձր ջերմություն կամ անսովոր վարքագիծ:

Նշանները **սուր ակտիվ ռեակցիայի** կարող են ներառել՝ ցան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվարացած շնչառություն, արագ սրտխփոց,

ÖÖPĖFHUàĈ
ŒWPKÚĚPĚŪĖŒ&ÁĜŪ&ĖĜĜĒ

Translation provided by the Immunization Action Coalition

գլխացավ և թուլություն: Դրանք սովորաբար սկսվում են պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ անց:

Ի՞նչ պետք է ես անեմ:

Եթե դուք կարծում եք, որ դա **սուր ակտիվ ռեակցիա** է կամ այլ անհետաձգելի դեպք, որը չի կարող սպասել, զանգահարեք 9-1-1 կամ զնացեք մոտակա հիվանդանոց: Հակատակ դեպքում՝ զանգահարեք ձեր բժշկին:

Այնուհետև, ռեակցիայի մասին պետք է հայտնել Vaccine Adverse Event Reporting System-ին (VAERS) (Պատվաստանյութերի հետ կապված անբարենպաստ երևույթների հաշվետվությունների համակարգին): Այդ տեղեկատվությունը պետք է գրանցի ձեր բժիշկը, կամ դա դուք կարող եք անել ինքներդ ՎԱԵՐՏ վեբ կայքի միջոցով՝ www.vaers.hhs.gov, կամ զանգահարելով **1-800-822-7967** հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:

6	Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիրը
----------	---

National Vaccine Injury Compensation Program-ը (VICP) (Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից վնասվածք ստացած մարդկանց:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ վնասվել են պատվաստանյութից, կարող են իրազեկվել ծրագրի և բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով **1-800-338-2382** կամ այցելելով VICP-ի վեբ կայքը՝ www.hrsa.gov/vaccinecompensation: Փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար կա ժամանակային սահմանափակում:

7	Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:
----------	--

- Հարցրեք ձեր առողջապահական խնամք ապահովողին: Նա կարող է ձեզ պատվաստանյութի փաթեթի ներդիրը տալ կամ առաջարկել այլ աղբյուրներ՝ տեղեկություններ ստանալու համար:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ:
- Կապվեք Centers for Disease Control and Prevention-ի (CDC) (Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնների) հետ՝
 - Չանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
 - այցելեք CDC-ի վեբ կայք՝ www.cdc.gov/hpv

Vaccine Information Statement HPV Vaccine

12/02/2016

Armenian

42 U.S.C. § 300aa-26

Office Use Only 
--

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ և հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: